

## ՔՈԼԻՆ ՓԱՌԸԼ ԵՐԵՔ ԺԱՍ ԱՅՅԵԼԵՑ ՊԵՅՐՈՒԹ ԱՊԱ ՄԵԿՆԵՑԱԻ ԴԱՍԱՍԿՈՍ



Լահուտ ԵլՓաուրլ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուրլը երէկ առաւօտեան ժամը 9:30ին ժամանեց Պէյրութի միջազգային օդակայան, ուր դիմաւորուեցաւ լիբանանցի իր պաշտօնակիցին՝ Մահմուտ Համ-մուտի կողմէ: Օդակայանէն փառուր ռեզիդենցիան հասնելու ճանապարհով Փաուրլը հարկահարկ չեղարկեց Լահուտ ԵլՓաուրլի հետ: Ժողովին ներկայ էին արտաքին գործոց

դէպի վարչապետարան, նախարար Մահմուտ ուր շուրջ երեք քառորդ ժամ տեւողութեամբ ժողով մը գումարեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ: Ժողովին ներկայ էին արտաքին գործոց

նախարար Մահմուտ Համմուտ, գաղթականներու նախարար Մահմուտ Համմուտ, ելեւ-մուտի նախարար Ծարը՝ Էջ 2

## ԱԼՊԵՐ ՄՈՒԽԱՅՊԵՐ ՅԱՆՁՆՈՒԵՑԱԻ ՀՈՂԻՆ

Երեսփոխան եւ արտաքին գործոց նախարար Ալպեր Մուխայպէրի յուղարկուած լուրերը կատարուեցաւ երէկ յետմիջօրէին, յոյս ուղղափառներու Պէյրութ Մէրիթ Մար էլիաս Եկեղեցոյ մէջ, մասնակցութեամբ պետական, քաղաքական եւ կուսակցական բազմաթիւ անձնակազմի ներկայութեամբ, որոնց կարգին՝ Զ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական կոմիտէի պատուիրակուածները:

Երեսփոխան Մուխայպէր իր մահկանացուն կնքած էր Ծարթ առաւօտ, 90 տարեկանին:

## ՆԵՊԻՆՆ ԴԵՐՐԻ ՄԵՐԺԵՑ ՏԵՍԱԿՑԻԼ ՔՈԼԻՆ ՓԱՌԸԼԻ ՀԵՏ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրրի երէկ մերժեց տեսակցիլ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուրլի հետ եւ մասնակցիլ անոր ընդունելութեան, աներկիցի դիւանագիտիկ փոք իրաւիւթեան, կեցուածքի պատճառով:

Հարցումի մը, թէ ի՛նչ կը մտածէ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի նոր առաջարկին՝ խաղաղութեան գծով միջապայի խորհրդա-ժողով մը գումարելու մասին, Պրրի ըսաւ. «Ասիկա իսրայէլեան նենգ փորձ մըն է արաբական եւ յատկապէս սելուական նախաձեռնութիւնը հարուածելու»:

Պրրի երէկ իր գրասենեակին մէջ տեսակցութիւն մը ունեցաւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ, որ Փաուրլի հետ իր տեսակցութեան արդիւնքները փոխանցեց անոր:

## ՎԵՐՁԻՆ ԺԱՍ

## ՎԱՂԸ՝ ՓԱՌԸԼ - ԱՐԱՅԱԹ ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Այն պահուն, երբ Արիէլ Շարոն կը յայտարարէր, թէ չի կրնար Եստէր Արաֆատի հետ խաղաղութեան համաձայնութեան մը հասնիլ, «Ս. Է. Է. Է.» պատկերասփիւռի կայանը հաղորդեց, թէ վաղը՝ Չորեքշաբթի Քոլին Փաուրլը երկրորդ հանդիպում մը պիտի ունենայ Արաֆատի հետ:

Փաուրլը, երէկ յետմիջօրէին յայտարարած էր, թէ Արաֆատի մասնակցութիւնը՝ Միջին Արեւելքի խաղաղութեան խորհրդաժողովին, զոր առաջարկած է Շարոն, կենսական չէ եւ բաւարար է, որ ան ուղարկէ նախարար մը: Ֆրանսա անմիջապէս հակադարձեց Փաուրլի: Վարչապետ Լիոնէլ ժոսպէն յայտարարեց, որ առանց Արաֆատի ներկայութեան, Միջին Արեւելքի խաղաղութեան յատկացուած որեւէ խորհրդաժողովի իմաստ չ'ունենար:

## ՎԱՐՉԱՊԵՏ ԶԱՐԻՐԻ ՄԵԿՆԵՑԱԻ ՈՒԱՇԻՆԿԱԹԸՆ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ մեկնեցաւ Ուաշինկթոն, ընկերակցութեամբ տնտեսութեան ու առեւտուրի նախարար Պասէլ Ֆլէյխմանի, Էլեմուտի նախարար Ֆուատ Սինիորայի եւ Կեդրոնական Դրամատան կառավարիչ Ռիատ Սալամի:

Վարչապետը վաղը Սպիտակ Տան մէջ տեսակցութիւն մը պիտի ունենայ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Գուշի հետ:

Հարիրի պիտի տեսակցի նաեւ փոխ նախագահ Տիք Չէյնի, Օտրակոյտի նախագահին, Համաշխարհային Դրամատան նախագահ Ճէյմս Ուիլֆինսընի եւ այլ բարձրաստիճան պատասխանատուներու հետ:

## ՖԱԹԸԻ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԵՆ՝ ՍԱՐՈՒԱՆ ՊԱՐՂՈՒԹԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԵՑԱԻ

## ՄԱԿԿԸ ԳԱՏԱՊԱՐՏԵ ԻՍՐԱՅԵԼԸ՝ «ՀԱՒԱՔԱԿԱՆ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ» ԿԱՏԱՐԱԾ ԸԼԼԱԼՈՒ ԶԱՆՅԱՆՔՈՎ

ՄԱԿԻ մարդկային իրաւունքներու յանձնա-ժողովը Իսրայէլը դատապարտեց «հաւաքական սպանութիւններ» կատարած ըլլալու յանցանքով՝ պահանջելով, որ բանակը վերջ տայ պաղեստինեան շրջաններուն դէմ ձեռնարկած արշաւին:

Յանձնաժողովը իր տարեկան նիստին որդեգրեց բանաձեւ մը, որ ներկայացուած էր արաբական եւ իսրայէլեան երկիրներու կողմէ: Բանաձեւը խիստ ռոճով կը դատապարտէ Իսրայէլի բռնարարներն ու մարդկային օրէնքներու խախտումները: Բանաձեւը կը վերահաստատէ նաեւ պաղեստինցի ժողովուրդին դիմադրելու արդար իրաւունքը: Բանաձեւը, որ կը վայելէր Կորակցութիւնը Եւրոպական Միութեան կարգ մը երկիրներուն, ինչպէս՝ Ֆրանսա, մտահոգութիւն յայտնեց Այսրիորդանանի գաղթականներուն մէջ տեղի ունեցող սպանութիւններուն մասին, որոնց կոհերը կ'ինէր, ծերեր ու երեխաներ են: Բանաձեւը առանձին միջադէպեր չ'ընդգծեց, այլ՝ բաւարարուեցաւ հաստատելով, թէ հաւաքական սպանութիւններ կը գործուին իսրայէլեան բանակին կողմէ:

Իսրայէլ կը պնդէ, որ միայն եօթնասուն պիստիւններ սպաննուած են ժեհիսի գաղթականներուն մէջ, ուր ամէնէն բոլորն արձանագրուեցան: Սակայն գաղթականները լրագրողներու ու նկարիչներու դիմաց փակ պահելու իրողութիւնը կասկած կ'արթնցնէ եւ ենթադրել կու տայ, թէ յայտարարուածէն շատ ավելի մեծ է սպաննուածներուն թիւը: Իսրայէլ ցարդ կանաչ յոյս չէ տուած նաեւ ՄԱԿի հետաքննիչ յանձնախումբի մը, որպէսզի այցելէ պաղեստինեան շրջանները՝ կացութեան արժեւորումը կատարելու համար: Յանձնաժողովը առաջարկած էր, որ ՄԱԿի մարդկային իրա-



Մարուան Պարրոթի

ւանց յանձնակատար Մէլիք Ռոպիհնըն առաջնորդէ հետաքննիչ յանձնախումբը:

Ծարը՝ Էջ 10

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄՈՒՒԹԵԱՆ ՀՈՎԱՆԱԻՐՈՒԹԵԱՄԲ

## ԿՈՎԿԱՍԻ ԵԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ՝ ԵՐԵՒԱՆԻ ՄԵՋ

Երէկ Երեւանի մէջ բացուեցաւ «Կովկասի Ելեկտրոնային Զարգացում» խորհրդաժողովը: Եւրոպական Միութեան հովանաւորութեամբ կայացող խորհրդաժողովին մասնակցելու համար հրահր ստացած երկիրներէն պատուիրակուածներն չէ ուղարկած միայն Ազրբայձանը:

Խորհրդաժողովի բացումը կատարեց Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան, Հայաստանի կառավարութեան ընդունելութեան տան մէջ: Իր բացման խօսքին մէջ վարչապետ Մարգարեան յայտնեց. «Նոր զարգացումներու հետ քայլ պահելու ձգտումը պարզապէս մեր բարի ցանկութիւնը չէ, այլ՝ ժամանակի պահանջ: Ցապաղիլ եւ չընել առաւելագոյնը կը նշանակէ անյուսալիօրէն ետ մնալ»: Ըստ Մարգարեանի՝ այս մտահոգութեամբ եւ նպատակաւորութեամբ է, որ Հայաստան նախաձեռնած է Կովկասի ելեկտրոնային զարգացման նուիրուած խորհրդաժողովին: «Կարեւոր նկատելով այս նախաձեռնութեան նպատակը, Եւրոպական Միութիւնը հանդէս եկաւ իբրեւ խորհրդաժողովի եւ հետագայ ծրագրերներու հովանաւոր եւ աջակից», յայտնեց վարչապետ Մարգարեան:

Խօսք առաւ նաեւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան: Նախարարը իր խօսքը ուղղեց Եւրոպական Ցանձնաժողովի ներկայացուցիչ Բրիտիսթը Փաթընին, որ յատկապէս վերահաստատեց Երեւանի մէջ տեղեկատուական արհեստագիտութեան մասնագէտներու պատրաստութեան շրջանային կեդրոնի ստեղծման ծախսերը հոգալու մտադրութիւնը:

Խորհրդաժողովի բացման նիստին ընթացքին ելոյթ ունեցան Հայաստանի փոխարարմիջոցներու եւ հաղորդակցութեան նախարար Անդրանիկ Մանուկեան, Ռուսիոյ հաղորդակցութեան եւ տեղեկատուութեան նախարար Լիոնիտ Ռէյման, Վրաստանի արտաքին գործոց փոխ նախարար Չամար Պերուկաշվիլի, Իրանի հաղորդակցութեան փոխ նախարար Մատուտ Շաֆի, Հայաստանի մէջ Բրիտանիոյ դեսպան Թիմոթի ձոնզ, Վրաստանի եւ Հայաստանի մէջ Եւրոպական Միութեան պատուիրակութեան ղեկավար Տորպէն Հոլցէ: Նախարար Օսկանեան ներկայեցրեց տեղեկացուցիչ, թէ նիստը ուղղակիօրէն կը սփռուի համացանցի վրայ:

Խորհրդաժողովի առաջին օրուան նիստերուն քննարկուեցան «Համաշխարհային ելեկտրոնային նախաձեռնութիւնները եւ անոնց օգտագործումը», «Ելեկտրոնային պատրաստակաւորութիւնը Հարաւային Կովկասի երկիրներու մէջ», եւ «Ելեկտրոնային զարգացումը ծառայեցնել հասարակութեան» նիւթերը:

Խորհրդաժողովը այսօր կը շարունակէ իր աշխատանքները:

## ՌՈՒՍԻՈՅ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ՆԱԽԱԳԱՀ ԲՈՉԱՐԵԱՆԻ ՀԵՏ



Քոչարեան - Ռէյման

Հայաստանի նախագահ Ռոպիք Քոչարեան երէկ ընդունեց Ռուսիոյ հաղորդակցութեան եւ տեղեկատուութեան նախարար Լիոնիտ Ռէյմանը, որ Հայաստան կը գտնուի մասնակցելու համար տեղեկատուական արհեստագիտութիւններու զարգացման նուիրուած խորհրդաժողովին, որուն հովանաւորն է Եւրոպական Միութիւնը:

Նախագահ Քոչարեան նշելով, որ տեղեկատուական արհեստագիտութիւններու զարգացումը առաջնահերթ է Հայաստանի համար, յայտնած է, թէ Հա-

Ծարը՝ Էջ 10

## ՊԱՔՈՒԻ ՄԵՋ ՅՈՅՅԵՐ՝ ԵԱԿԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԻ ԸՆԹԱՑՔԻՆ

Երէկ Պաքուի մէջ տեղի ունեցաւ ԵԱԿԻ 10րդ տնտեսական խորհրդաժողովի նախապատրաստական երրորդ սեմինարը: Սեմինարին կը մասնակցի նաեւ Հայաստանի պատուիրակութիւնը:

Խորհրդաժողովի կայացման ընթացքին, տեղի ունեցաւ Ազրբայձանի «Ղարաբաղի ազատագրման կազմակերպութեան» կողմէ կազմակերպուած ցոյց մը: Իշխանութիւնները արտօնագիր չէին տուած ցոյցի կազմակերպման համար: Յուշարարները «Հայեր, հեռացէ՛ք» կոչելով եւ խորհրդաժողովի կազմակերպիչներուն հայհոյելով փորձած են մօտենալ ժողովատեղիին, սակայն չեն յաղթած: Յուշարարներու հաւաքման վայրը ժամանած ոստիկանական բաժանմունքը բիրեք գործածած է՝ ցրուելու համար ցոյցարարները: Ոստիկանութիւնը նաեւ ձեռնարկած է քանի մը ցուցարար:

ՔՈՒՆ ՓԱՌԸԸ ԵՐԵՎ ՃԱՍ ԱՅՅԵԼԵՑ...

Շարունակում Ա. Էջեց



Փաուլը և Հարիրի՝ մամլոյ միացեալ ասուլիսին ընթացքին



Փաուլը և Ասատ

Ֆուտա Սինիորա, պաշտպանութեան նախարար Սալի Հըրաուի, ներքին գործոց նախարար Էլիաս Մըր, մշակութի նախարար Ղասսան Սալամէ, իսկ ամերիկեան կողմէն՝ ամերիկեան դեսպանատան գործավար Քարոլ Քալին, արտաքին գործոց նախարարի Միշին Արեւելքի օգնական Ուիլիամ Պըրնս, արտաքին գործոց նախարարի Ռիչըրտ Պաուլը, Կինուրական հարցերու խորհրդատու Կորալար Ուոլթըր Տորան և արտաքին գործոց նախարարութեան տնօրէն Քրիշ Բելի:

Վարչապետ արանէն Փաուլը ուղղակի մեկնեցաւ օդակայան, ուր մերժեց որեւէ յայտարարութիւն կատարել:

Փաուլը ուղղուեցաւ դէպի Դամասկոս, ուր նախագահական պալատին մէջ ժողով մը գումարեց նախագահ Պաշար Ասատի հետ, ներկայութեամբ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէիի և բարձրաստիճան այլ պատասխանատուներու:

Փաուլը երեկոյեան Դամասկոսէն վերադարձաւ Երուսաղէմ:

ԿԱՐԾԵՍ ԿԸ ԳՏՆՈՒԻՆՔ 1982Ի ՄԹՆՈԼՈՐՏԻՆ ՄԷՁ...

Կ'ԸՍԵ ԺՈՄՊԼԱԾ

Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան ղեկավար երեսփոխան Ուալիտ Ժոնալաթ երէկ տեսակցութիւն մը ունեցաւ շիի համայնքի փոխ նախագահ շէյխ Ալլաթի Ամիր Քապալանի հետ. անոնք քննարկեցին երկրին և շրջանին վերջին իրադարձութիւնները: Միւս ֆոնի Քապալան շեշտեց այս պահու միասնականութեան անհրաժեշտութիւնը՝ արաբական և իսլամական աշխարհին մէջ, միասնաբար դիմագրաւելու համար իսրայէլեան սպառնալիքները:

Երեսփոխան Ժոնալաթ խօսելով իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի առաջարկած խաղաղութեան խորհրդատուութեան մասին, ըսաւ, թէ այդ մէկը իրեն կը յիշեցնէ 1982ի մթնոլորտը և կարծես դարձեալ կը գտնուինք 17 Մայիսի մը սեմին, այս անգամ արաբական նոր փորձով մը:

Ժոնալաթ նաեւ խօսեցաւ նախարար Ղապի Արիտի մասին և ըսաւ. «Այսօր դարձեալ պարոն Արիտին կանց առնուեցաւ Սերայի պաշտօնական ժողովէն, ինչպէս պատահած էր Արաբական վեհաժողովին: Ասիկա քաղաքական սխալ մըն է, ընդվզեցուցիչ սխալ: Մենք մեր կուսակցութեան մէջ մերժեցինք, որ Ղապին երթայ և ինք ևս մերժեց չարիքի հետ Ուաշինկթըն երթալ»:

Ժոնալաթ նաեւ խօսեցաւ նախարար Ղապի Արիտի մասին և ըսաւ. «Այսօր դարձեալ պարոն Արիտին կանց առնուեցաւ Սերայի պաշտօնական ժողովէն, ինչպէս պատահած էր Արաբական վեհաժողովին: Ասիկա քաղաքական սխալ մըն է, ընդվզեցուցիչ սխալ: Մենք մեր կուսակցութեան մէջ մերժեցինք, որ Ղապին երթայ և ինք ևս մերժեց չարիքի հետ Ուաշինկթըն երթալ»:

ԿՈՒՂՈՒԻ

Վարպետ ոսկերիչ (սետեթըր) մը, հեռ. 03-882947:

ԼԱՆԹԵՐՆ

Լեւոն և Սոֆիա Յակոբեան Ազգային քուէճին մէջ հաստատուած Պուրճ Կամուտի Առաջին Ժողովրդային Գրադարանը 15 Ապրիլ 2002էն սկսեալ կը գործէ հետեւեալ ժամանակացուցով.

Երկուշաբթիէն Ուրբաթ օրերը՝ առաւօտեան ժամը 10:00էն երեկոյեան ժամը 8:00

Շաբաթ օրերը՝ առաւօտեան ժամը 9:00էն կեսօրը եւ ժամը 4:00

Գրադարանէն կրնան օգտուիլ ամէն տարիքի և զանազան լեզուներով հետաքրքրութեան տէր անձեր:

Տեղի կ'ունենայ 21 - 24 Ապրիլ 2002ին, Տեր Զօրի մէջ: Կը մասնակցին բոլոր թեմերը ներկայացնող երիտասարդներ՝ 18 - 35 տարեկան:

ՊՈՒՐՃ ԿԱՄՈՒՏԻ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՖԻԱ ՅԱԿՈԲԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՈՒԼԷՃ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՔՈՒՆ ՓԱՌԸԸ ԵՒ ՍԱՇՏՈՒՏ ԸԱՍՏՈՒՄԻ ԽՕՍԵՐՈՒՆ ԹԱՐԳԱՆՈՒԹԵԱՆՑ ԳԵՌՈՎ

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԱՊԱՐԱՆՔԸ ԿԸ ԼՈՒՍԱՐԱՆԷ

Նախագահական ապարանքի տեղեկատուական գրասենեակը կը հաղորդէ, թէ երէկ, Պապատայի պալատին մէջ կայացած Փաուլը - Համմուտ մամլոյ միացեալ ասուլիսին ընթացքին կատարուած թարգմանութիւնը (անգլերէն - արաբերէն և արաբերէն - անգլերէն) պահանջած է Պէյրութի մէջ ամերիկեան դեսպանատունը և թարգմանող Նատա Եամմին ամերիկեան դեսպանատան պաշտօնէալ է: Ան վերջին պահուն հրաւիրուած է գործի, որովհետեւ Փաուլըի պաշտօնական թարգմանը բացակայած է:

Նախագահական ապարանքը շատ հաւանաբար այս հաղորդագրութիւնը կը կատարէ առ ի լուսաբանութիւն ի տես այն ձախող երեւոյթին, որ պատահեցաւ: Արդարեւ, թարգմանութիւնը այնքան ձախող էր, որ յաճախ նախարար Համմուտ հարկադրուեցաւ ճշդումներ կատարելու և միջամտելու, իսկ արաբի թղթակիցները երբեմն չկարողացան նոյնիսկ զգուշ իրենց ծիծաղը...

ՔՈՒՆ ՓԱՌԸԸ ԼԻԲԱՆԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻՌՈՎ

ՀԱԿԱՍՍԵՐԻԿԵԱՆ ԵՒ ՀԱԿԱՍՍՐԱՅԷԼԵԱՆ ՑՈՅՑԵՐ՝ ԶԱՆԱԶԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՄԷՁ

Երէկ Լիբանանի գանազան շրջաններու մէջ շարունակուեցան հակամերիկեան և հակաիսրայէլեան ցոյցերը, որոնց գլխաւորը հանդիսացաւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլըի Պէյրութ ժամանումին դէմ բողոքի մեծ ցոյցը, որ տեղի ունեցաւ օդակայանի ճամբուն վրայ: Փաուլըի «Թափօրը» անցաւ հազարաւոր ցուցարարներով ողողուած մայրուղիէն, որ օդակայանէն կ'ուղղուի դէպի Պապատա: Ցուցարարները հրկիզեցին ամերիկեան և իսրայէլեան դրօշակներ, ինչպէս նաեւ բարձրացուցին բազմաթիւ պատաստներ, որոնք կը կրէին հակասիրտական և հակամերիկեան լոգոններ: Այս առիթով նաեւ փակուեցան կրթական շատ մը հաստատութիւններ:

Բողոքի ցոյցեր տեղի ունեցան նաեւ Սալտայի և Նահր Պարէտի (հիւսիս) պաղեստինեան գաղթականներին մէջ, որոնց մասնակցեցան մեծաթիւ ցուցարարներ:

ԱԿՆԱՐԿԵԼՈՎ ՓԱՌԸԸ ԵՐՋԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆ

ՀԸՉՊԱԼԼԱ ՆԿԱՏԵԼ ԿՈՒ ՏԱՅ, ՈՐ ԱՅՍ ՇՐՋԱՊՏՈՅՑԸ ՇԱՐՈՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՊԱՍՏԵԼՈՒ ԿԸ ՄԻՏԻ

Հրգայալա երէկ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ ակնարկելով Քոլին Փաուլըի շրջան (ընդ որում՝ Լիբանան) այցելութիւնը կը միտի գորակցութիւն ապահովել թշնամի իսրայէլի և անոր վարչապետ Արիէլ Շարոնի քաղաքականութեան: Հրգայալա վստահեցուց, թէ պիտի շարունակէ ազատագրական պայքարը, մինչեւ որ անբողոքեամբ ազատագրուին լիբանանեան հողերը:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՏՆՉԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՐԷԿ ՇԱՐՈՆԻՆԱԿՈՒԵՑԱՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՁ

Իսրայէլեան հրետանին երէկ ուժեղացուց հարակային Լիբանանի սահմանամերձ գիւղերը, ինչպէս նաեւ Մագարէճ Շըպաայի մէջ՝ լիբանանեան դիրքեր: Իսկ իսրայէլեան օդանաւեր թռիչքներ կատարեցին հարակային Լիբանանի զանազան շրջաններու վերջին: Իսրայէլեան այս ոտնձգութիւնները կը կատարուէին այն պահուն, երբ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը կ'այցելէր Լիբանան:

ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐՈՒՆ ՈՉ ՄԷԿ ՏՈՒԵԱԼ ԿՈՒ ՏԱՆՔ ՄԱՋԱՐԷՅ ՇԸՊԱԱՅԻ ՄԵՐ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒՆ ԳԾՈՎ Կ'ԸՍԵ ԱՐԻՏԻ

Նախարար Ղապի Արիտի երէկ կոչ ուղղեց Ուաշինկթընի ճնշելու իսրայէլի վրայ, որպէսզի ան հատուց պաղեստինցի ժողովուրդին և արաբական բոլոր իրաւունքները, այլապէս խաղաղութիւն պիտի չըլլայ: Ան ըսաւ նաեւ, որ Լիբանան ոչ մէկ տուեալ կու տայ Մագարէճ Շըպաայի մեր իրաւունքներէն հրաժարելու գծով և անոր կը յիշեցնենք Դիմադրութեան մեր կառչածութիւնը: Արիտի ըսաւ նաեւ, որ Ուաշինկթըն շարժեցաւ միայն, երբ արիւն հոսեցաւ, անգին և արդէն ուշ էր:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

- Հայկական Երեսփոխանական Գրասենեակը ամէն օր առաւօտեան ժամը 9:00էն կ'ստորէ ետք ժամը 5:00 կ'ընդունի դիմումներ՝ հետեւեալ ծառայութիւններուն համար:
1) Երեսփոխանական առողջապահութիւն (ուղաքար և պետական հիւանդանոցային բուժում):
2) Ընկերային Ապահովութեան Ազգային Սնտուկ (Տամամ):
3) Ծանր և երկարատեւ բուժման կարօտ հիւանդութիւններու դեղորայքի ապահովում:
4) Գաղթականներու նախարարութեան հետ առընչուող հարցեր:
5) Բնակարանային հարցերու նախարարութեան (իւրէմ) դիմումներ:
6) Աշխատանքի նախարարութեան հետ առընչուող հարցեր:
7) Քաղաքապետութիւններու հետ կապուած հարցեր:
8) Ընդհանուր Ապահովութեան Սպասարկութեան (Ամէ Էլ Ամմ) հետ կապուած հարցեր:
9) Դատական և իրաւաբանական հարցերու մասին խորհրդակցութիւն և ցուցմունքներ:
Դիմողները պետք է ներկայանան «Ծաղոյեան» կեդրոն, Երկրորդ յարկ, Երեսփոխանական Գրասենեակի և կամ նախքան ներկայանալը հեռաձայնել 01 - 259881 և 01 - 242582 թիւերուն:
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՅՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՅՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

- ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Ընդհանուր Ապահովութեան Ուժերու ընդհանուր տնօրէնութիւնը կը յայտարարէ, որ կազմակերպած է քննութիւն - մրցանք մը Բ. կարգի քննիչներու համար:
Թեկնածուները պետք է լրացնեն հետեւեալ պայմանները.
• Լիբանանցի՝ աւելի քան տասը տարիէ ի վեր:
• Դիմումի ներկայացման ատեն 28 տարիքը անցած պետք չէ ըլլայ, եւ հասակը՝ առնուազն 168 սմ.:
• Իր քաղաքացիական իրաւունքներն չէ զրկուած, մէկ ամսէն աւելի բանտարկութեան պատիժ չէ ստացած և բրտական յանցանքի համար չէ դատապարտուած:
• Ունի թեքմիջ Բ. պարալորտա, էլեքթրոնիկ կամ համակարգիչներու ծրագրումի մասնագիտութիւն:
• Կատարած է պարզ գիմուրակային ծառայութիւնը տեղակալներու 12րդ, 13րդ կամ 14րդ խմբակին, ենթասպաներու 25րդ, 26րդ, 27րդ խմբակին, կամ գիմուրակներու 54րդ, 55րդ և կամ 56րդ խմբակին հետ:
Դիմումները պետք է ներկայացնել անձամբ, 7էն 29 Մայիս 2002, Ընդհանուր Ապահովութեան Ուժերու գլխաւոր կեդրոնատեղի, Պէյրութի Արդարութեան պալատին դիմաց:
Յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել Հայկական Երեսփոխանական Գրասենեակ, «Ծաղոյեան» կեդրոն, Բ. յարկ:

ԼՕԽԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
Գործակցութեամբ Լիբանանի Մանուկներու Ազգային Մարմինին՝ ԼՕԽԻ Շրջանային Վարչութիւնը կը կազմակերպէ հայ համայնքի մէջ ընտանեկան հարցերու լուծման, քրիստոնեական կրօնքի պարզեւած բարիքներու դիտանկիւնէն դիտուած, բանախօսական հանդիպում մը, որ տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի 17 Ապրիլ 2002ին, կեսօրէ ետք ժամը 4:00ին, Ա. Պ. Ը. Բ. կեդրոնի «Թնճուկեան» սրահին մէջ:
Խօսք պիտի առնէ Գեղամ Եպս. Խաչերեան, Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի:
ՇՐՋԱՆ

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ ՎԱՆԱՅ ԶԱՅՆ
Այսօր երեկոյեան ժամը 6:00ին կրնաք ունկընդորել յատուկ յայտագիր մը՝ նուիրուած հայկական ժողովրդական երգերու ծանօթ մեկնաբան՝
ՀԱՅՐԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆԻ
Յայտագիրին կրկնութիւնը՝ գիշերուան ժամը 10:00ին:

ԼԱՆԹԵՐՆ
Լեւոն և Սոֆիա Յակոբեան Ազգային քուէճին մէջ հաստատուած Պուրճ Կամուտի Առաջին Ժողովրդային Գրադարանը 15 Ապրիլ 2002էն սկսեալ կը գործէ հետեւեալ ժամանակացուցով.
Երկուշաբթիէն Ուրբաթ օրերը՝ առաւօտեան ժամը 10:00էն երեկոյեան ժամը 8:00
Շաբաթ օրերը՝ առաւօտեան ժամը 9:00էն կեսօրը եւ ժամը 4:00
Գրադարանէն կրնան օգտուիլ ամէն տարիքի և զանազան լեզուներով հետաքրքրութեան տէր անձեր:
Տեղի կ'ունենայ 21 - 24 Ապրիլ 2002ին, Տեր Զօրի մէջ: Կը մասնակցին բոլոր թեմերը ներկայացնող երիտասարդներ՝ 18 - 35 տարեկան:
ՊՈՒՐՃ ԿԱՄՈՒՏԻ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՖԻԱ ՅԱԿՈԲԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՈՒԼԷՃ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ
ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ





# ՀԱՅ ԴԱՏ

# ՀԱՅ ԴԱՏ

## ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ ՀՐԵՎԱՆԻ ԼՈՊԻԷՆ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ ՃՇԿԵԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԻՐ ԿԵՅՈՒՄԸ

Ամերիկեան «Նիւ Եոքս Թայմզ» եւ հրէական «Ճեփրուզալ Բոսթ» թերթերուն համաձայն, Միացեալ Նահանգներու հրէական լուսին աշխատած է Հայկական Յեղասպանութեան ճանաչման բանաձեւին դէմ: Այս հարցը դեմքերուն լոյսին տակ, Հ. Յ. Դ. Ուաշինգթոնի Հայ Դատի Յանձնախումբը վերջերս դիմած է Միացեալ Նահանգներու մէջ հրէական լուսին պարագլուխ հանդիսացող «Ամերիկայի Խորհրդակցութեան ժողովրդային հարցերու յանձնախումբ»-ին («Էֆֆեյ») եւ պաշտօնապէս անկէ պահանջած է, որ Միացեալ Նահանգներու կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչման նկատմամբ իր կեցուածքը յստակացնէ:

Արդարեւ, «Ճեփրուզալ Բոսթ» Ապրիլ 7-ի իր թիւին մէջ գրած է. «Ամերիկայի հրէական լուսին բանալի դեր խաղաց կասեցնելու համար Բոնիֆիսի կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչման բանաձեւը: Երկու օր ետք «Նիւ Եոքս Թայմզ» գրեց. «Ամերիկայի հրէական կազմակերպութիւնները թուրքիոյ ի նպաստ լուսինի կատարեցին ընդդէմ ամերիկահայերու ճիշդութեան, որոնք կը ձգտին 1915-1921 թուականներու Հայկական սպանութիւնները ցեղասպանութիւն որակել»:

«Էֆֆեյ»-ին ուղղուած նամակին մէջ Հայ Դատի Յանձնախումբը մտահոգութիւն յայտնեց վերոյիշեալ հարցը դեմքերուն համար եւ պահանջեց, որ ամերիկահայութեան պարզաբանումներ տայ Հայկական Յեղասպանութեան նկատմամբ իր կեցուածքին շուրջ:

## ՆՈՐ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ «ԳԵՐՄԱՆԻԱՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅՆ ՈՒ ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ»

Հայրենի անուանի պատմաբան Գէորգ Ղարիբջանեան Հայկական Յեղասպանութեան մասին ուսումնասիրութիւններ կատարելէ ետք, վերջերս հրատարակած է «Գերմանիան, Հայկական հարցը եւ Հայոց Յեղասպանութիւնը» անունով գիրք մը, ուր կ'անդրադառնայ 1878-1918 ժամանակաշրջանի պատմական իրադարձութիւններուն:

Հեղինակը կը նկարագրէ Ժ.Պ. դարու երկրորդ կէսին ետք Գերմանիոյ «գրոհ դէպի արեւելք» արտաքին քաղաքականութիւնը, որուն միջոցով ան կը ջանար գերմանական ազդեցութիւնը ընդարձակել Թուրքիոյ, Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ կուռախնձոր դարձած մերձաւոր Արեւելքի մէջ: Ղարիբջանեան կը բացատրէ, որ Գերմանիան այդ պատճառով ամէն ձեւով կը չզօգնուէր թուրքին:

Հեղինակը գիրքին մէջ կը խօսի թուրքիոյ հովանաւորելու եւ քաղաքական գերմանական հայապնաս քաղաքականութեան մասին, որուն շնորհիւ թուրքիոյ բանակը դարձած էր ժամանակակից բանակ:

Ղարիբջանեան թուրքիոյ վեց նահանգներու մէջ բարենորոգումներու ձախողութեան եւ Հայկական Յեղասպանութեան կազմակերպման պատասխանատու կը նկատէ օրուան մեծ պետութիւնները եւ յատկապէս՝ Գերմանիան:

Գերմանիոյ պետութեան դիրքորոշումն ու քաղաքականութիւնը ներկայացնելէ ետք, Ղարիբջանեան կը խօսի գերմանացի անուանի անձնաւորութիւններու մասին, որոնք օրին բողոքած են Օսմանեան ջարդերուն դէմ եւ կոչ ուղղած են աշխարհին, որպէսզի պաշտպանէ Հայ ժողովուրդը: Ուրիշներու կողմէն, հեղինակը կը խօսի Ֆրեյտիդե Էնկելսթի, հիտլարտ Բենեդիտտի, Եոհաննէս Լեփսուսի եւ Արմին Վեկե՛նցի մասին:

Պատմաբանը կը հաստատէ, որ 1890ական թուականներուն բազմաթիւ լեզուներով լոյս տեսած գիրքեր եւ յօդուածներ անհերքելի ձեւով կ'ապացուցեն, թէ Օսմանեան կայսրութիւնը նախօրոք մշակած էր Հայերը ընդհանրելու իր ծրագրերը:

## ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԿՐԹԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԾՈՂՈՎՐ ԿԸ ՔՆՆԷ «ՈՂՋԱԿԻՉՈՒՄ-ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ 2003» ԲԱՆԱՉԵԻԸ

3 Ապրիլին, Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը Սաքրամենթոյի (Քալիֆորնիա) «Մերաթոն» Ֆորումի խորհրդարանի կրթական յանձնաժողովին առջեւ վկայութիւն տուած է ի նպատակ «Ողջակիցութեան-Յեղասպանութիւն 2003» կրթական ծրագրի: Ներկայացուցիչներու Տան անդամներ Փոլ Բորից եւ Մարք Ուալլընտ ներկայացուցած են «Խորհրդարանի բանաձեւ 2003»-ը՝ Քալիֆորնիոյ մէջ յառաջացրելու համար մարմին մը, որուն նպատակը պիտի ըլլայ դպրոցներուն մէջ ապահովել ուսուցումը մարդկութեան դէմ գործուած ոճիրներու, որոնց շարքին՝ Հայկական Յեղասպանութեան: Հայ Դատի Յանձնախումբի կողմէն, այս բանաձեւին զօրավիճականդան են Հարաւային Քալիֆորնիայի գահազան կազմակերպութիւնները: Լեյլէ ետք բանաձեւին զօրակցող կազմակերպութիւններուն վկայութիւններուն վկայութեան ծրագրին կարեւոր մասը պէտք է ըլլայ:

Բանաձեւին վաւերացման պարագային, գայն պատրաստող կազմակերպութիւնները պիտի ստանան անհրաժեշտ օժանդակութիւնները՝ ստեղծելու համար կեդրոններ, որոնք պիտի ծառայեն այս նպատակին հետապնդման: Այս կեդրոնները, Քալիֆորնիոյ նահանգային համալսարանին հետ համագործակցութեամբ, աշխատանք պիտի տանին գաղութիւններուն հետ պատրաստելու ուսուցիչներու եւ աշակերտներու յատուկ կրթական ծրագրերին:

Իր գրաւոր վկայութեան մէջ Հայ Դատի Յանձնախումբը վերահաստատած է իր անփոփոխելի զօրակցութիւնը բանաձեւին՝ վստահեցնելով, որ Յեղասպանութեան նիւթին դասաւանդումը Քալիֆորնիոյ կրթական ծրագրին կարեւոր մասը պէտք է ըլլայ:

Բանաձեւին վաւերացման պարագային, գայն պատրաստող կազմակերպութիւնները պիտի ստանան անհրաժեշտ օժանդակութիւնները՝ ստեղծելու համար կեդրոններ, որոնք պիտի ծառայեն այս նպատակին հետապնդման: Այս կեդրոնները, Քալիֆորնիոյ նահանգային համալսարանին հետ համագործակցութեամբ, աշխատանք պիտի տանին գաղութիւններուն հետ պատրաստելու ուսուցիչներու եւ աշակերտներու յատուկ կրթական ծրագրերին:

Կրթական ծրագրի յատուկ մասը կ'ընդգրկէ «Ողջակիցութեան-Յեղասպանութիւն 2003» կրթական ծրագրի մասին: Այս կեդրոնները, Քալիֆորնիոյ նահանգային համալսարանին հետ համագործակցութեամբ, աշխատանք պիտի տանին գաղութիւններուն հետ պատրաստելու ուսուցիչներու եւ աշակերտներու յատուկ կրթական ծրագրերին:

**ԹՐՔԱԿԱՆ ՈՒՐԱՅՄԱՆ ՓՈՂՉԻՆ ԴԵՄ ՊԱՏԱՍԻՆ**  
Ապրիլ 10ին Թրքական Մշակութային կազմա-

կերպութիւնը մամուլի ասուլիս մը տուած է Սաքրամենթոյի (Քալիֆորնիա) «Մերաթոն» Ֆորումի խորհրդարանի կրթական յանձնաժողովին առջեւ վկայութիւն տուած է ի նպատակ «Ողջակիցութեան-Յեղասպանութիւն 2003» կրթական ծրագրի: Ներկայացուցիչներու Տան անդամներ Փոլ Բորից եւ Մարք Ուալլընտ ներկայացուցած են «Խորհրդարանի բանաձեւ 2003»-ը՝ Քալիֆորնիոյ մէջ յառաջացրելու համար մարմին մը, որուն նպատակը պիտի ըլլայ դպրոցներուն մէջ ապահովել ուսուցումը մարդկութեան դէմ գործուած ոճիրներու, որոնց շարքին՝ Հայկական Յեղասպանութեան: Հայ Դատի Յանձնախումբի կողմէն, այս բանաձեւին զօրավիճականդան են Հարաւային Քալիֆորնիայի գահազան կազմակերպութիւնները: Լեյլէ ետք բանաձեւին զօրակցող կազմակերպութիւններուն վկայութիւններուն վկայութեան ծրագրին կարեւոր մասը պէտք է ըլլայ:

Բանաձեւին վաւերացման պարագային, գայն պատրաստող կազմակերպութիւնները պիտի ստանան անհրաժեշտ օժանդակութիւնները՝ ստեղծելու համար կեդրոններ, որոնք պիտի ծառայեն այս նպատակին հետապնդման: Այս կեդրոնները, Քալիֆորնիոյ նահանգային համալսարանին հետ համագործակցութեամբ, աշխատանք պիտի տանին գաղութիւններուն հետ պատրաստելու ուսուցիչներու եւ աշակերտներու յատուկ կրթական ծրագրերին:

հիւանդութիւնները»: Նշելով մամուլի ասուլիսին ներկայ գտնուած են Հայ Դատի Յանձնախումբի Բէն անդամներ եւ հարցունքներով նեղի մատուցած են թրքական կազմակերպութեան ներկայացուցիչները: Անոնք նախ հարց տուած են, թէ ինչո՞ւ թրքական Մշակութային կազմակերպութիւնը միակն է, որ դէմ է «Ողջակիցութեան-Յեղասպանութիւն 2003» բանաձեւին: Ապա անոնք հարցապնդած են Քարահանը՝ Հայկական Յեղասպանութեան իրողութիւններուն շուրջ: Քարահանը հետեւողականօրէն անճիշդ յայտարարութիւններ կատարած է թէ՛ վերոնշեալ բանաձեւին եւ թէ՛ պատմական իրողութիւններուն շուրջ: Չդիմանալով իր արտասույթիւններուն ուղղուած քննադատութիւններուն եւ սրբազանութեանը՝ Քարահանը մէջբերումներ կատարած է Յեղասպանութեան նուիրուած 1942ի անձնատուի մասին: Ան երբ տակաւին Յեղասպանութեան երբ գոյուած թիւն չունէր:

## ԻՍԼԱՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԻՆ՝

## ԿՈՒԼԻԵԻ ԴԱՐՁԵԱԿ Կ՛ԱՐԾԱՐԾԷ «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՀԱՔԵԿՉՈՒԹԵԱՆ» ՀԱՐՅԸ

Իսլամական Խորհրդաժողովի կազմակերպութեան արտաքին գործոց նախարարներու վերջին ժողովին, ահաբեկչութեան դէմ պայքարի քննարկման նիստին, Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար Վիլայէթ Կուլիե անդամներուն ու անդամակազմներուն յայտարարած է լուրջ սպառնալիքներ՝ անոնց «վառ օրինակը» նկատելով Ղարաբաղի վարչակարգն ու անոր պաշտպան Հայաստանը:

Կուլիե իր խօսքը ուղղած է աւելի քան 50 երկիրներու ներկայացուցիչներուն եւ ըսած է, որ թէեւ աշխարհը միջազգային ահաբեկչութեան մասին սկսած է խօսիլ Սեպտեմբեր 11ի զէպերէնէ ետք, սակայն Ազրպէյճան այդ շարքին «բոլոր սարսափները» կ'ապրի 1987էն ի վեր: Ան նշած է, որ 1987-1995ի միջեւ Հայաստանի յատուկ ծառայութիւնները Ազրպէյճանի դէմ գործած են աւելի քան 30 «ահաբեկչական արարքներ», որոնց զոհ գացած են աւելի քան 2 հազար ազերիներ եւ վիրանորուած են քանի մը հազար ուրիշներ:

Ազրպէյճանի «Կազէթ 525» թերթը կը գրէ, թէ «քննադրուելով Լեւոնային Ղարաբաղի» օրինակով՝ Կուլիե ցոյց տուած է, որ անջատողական վարչակարգերը միջազգային ահաբեկչութեան, թմրեցուցիչներու, գէնքի մթաքսանէրութեան եւ կեղծ դրամներու պատրաստութեան օժանդակ կը հանդիսանան: Կուլիե այս առիթով շեշտած է Ղարաբաղի հարցին անդրադարձող բանաձեւերու նկատմամբ կազմակերպութեան անդամ երկիրներուն լուրջ վերաբերումին կարեւորութիւնը:

Թերթին համաձայն, Կուլիե խորհրդաժողովի աշխատանքներուն ընթացքին հանդիպում մը ունեցած է իսլամական Խորհրդաժողովի կազմակերպութեան գլխաւոր քարտուղար Ապտուլհաք Մաքսում Պիլազզիդի հետ եւ անոր հետ քննարկած է կազմակերպութեան հետ Ազրպէյճանի յարաբերութիւններուն սերտացման կարելիութիւնները եւ Պիլազզիդի Ազրպէյճան կատարելիք այցելութիւնը:

## ԱԼԻԵԻ-ՉԵԻԻՔՈՂ ԿԸ ՔՆՆԱՐԿԵՆ ՆԱԽԻՉԵԻԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիե վերջերս ընդունեց Ազրպէյճանի մէջ թուրքիոյ ղեկավար Ունայ Չեիքոզը: Հանդիպումին ընթացքին ընդհանրապէս քննարկուեցաւ Նախիջևանի իրավիճակը:

Ալիե «չափազանց գնահատելի» նկատեց թուրքիոյ պետական նախարար Ռեսաթ Տողուբի զիջաւորած մէկ պատուիրակութեան նախիջևանի այցելութիւնը: Ան անհրաժեշտ նկատեց Ազրպէյճանի եւ թուրքիոյ միջեւ համագործակցութիւնը՝ Նախիջևանի տնտեսութեան զարգացման եւ սահմաններու անվտանգութեան ապահովման համար:

Իր կարգին, Չեիքոզ Ալիեի յայտնեց, որ թուրքիա «անօգնական պիտի չզգէ Նախիջևանը, այնքան ատեն որ ան կը գտնուի Հայաստանի պարտադրած շրջակա կտուր պայմաններուն մէջ»: Դեպքանը հաւաստիացուց, որ թուրքիա տնտեսապէս նեցուկ պիտի կանգնի Նախիջևանին:

## ԱՊՐԻԼ 24Ի ՆԱԽՕՐԵԱԿԻՆ՝

## ԹՈՒՐԿԻԱ Կ՛ՈՐՈՇԷ ԴԻՄԵԼ «ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ» ՔԱՅԼԵՐՈՒ

Թրքական «Հուրիէթ» թերթը կը տեղեկացրէ, որ քանի «Իւրաքանչիւր Ապրիլ 24ի նախօրեակին աշխարհի զանազան երկիրներու մէջ Հայկական Յեղասպանութիւնը կը սկսի շահարկուիլ», թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը որոշած է այս տարի այդ ուղղութեամբ «կանխարգելիչ» բայերու դիմել: Թերթը կը նշէ, որ թուրքիա նման որոշում մը տուած է Միացեալ Նահանգներու նախագահ Յորճ Պուշին ուղղուած նամակի մը պատահով: Նամակը նախագահ Պուշին կը պահանջէ Ապրիլ 24ի առիթով իր աւանդական յայտարարութեան մէջ օգտագործել «Յեղասպանութիւն» բառը:

Ըստ «Հուրիէթ»-ի, Ուաշինգթոնի թուրքիոյ ղեկավարութիւնը իր կարգին պահանջած է ակազմը չտալ հայկական կոչերուն:

## ՔԱՅՄԱՉՔԱԿԱՆ ԿԸ ԴԻՄԵ ՆԱԽԱԿԱՆ ՊՈՒՏԵՐ

Մ. Նահանգներու մէջ Ամերիկայի թրքական կազմակերպութիւններու ընկերակցութեան նախագահ Օրհան Քալմաքլան նախագահ Յորճ Պուշին ուղղած է նամակ մը, որուն մէջ Պուշին պահանջած է Ապրիլ 24ին հայութեան ուղղելիք իր խօսքին մէջ «պատմական դէպքերը նկարագրել ճիշդ եզրերով»: Յորճ Պուշին իր նախնարարական արշաւին ընթացքին խոստացած էր գործածել ցեղասպանութիւնը եզրը, սակայն ընտրուելէ ետք դրժած էր իր խոստումը եւ անցեալ տարի Ապրիլ 24ի Յիշատակման Օրուան առիթով իր ուղերձին մէջ ցեղասպանութեան անդրադարձ էր իբրեւ «պատմութեան մեծագոյն ողբերգութիւններէն մէկը, որուն ընթացքին մօտ մէկուկէս միլիոն հայեր բռնազարգի ենթարկուեցան եւ ջարդուեցան»:

Իր նամակին մէջ Քալմաքլան յատկապէս նշած է, թէ «թուրքիոյ մէջ այսօր հայեր եւ թուրքեր կողք-կողքի կ'ապրին, եւ հազարաւոր հայեր թուրքիոյ մէջ աշխատանքի առիթներ գտած են»:

Աւելի՛ն. Քալմաքլան Պուշին յիշեցուցած է, թէ անցեալ տարուան ուղերձին մէջ Պուշ օգտագործած է «տեղահանութիւն» բառը, մինչ Ա. Աշխարհամարտին «անցատողական հայեր սպաննած են մեծ թիւով իսլամներ»:

**ՄԱՐՁԵԿ**  
հ.ա. ՏԱՐԻ, 2002  
ԹԻԻ 2 (236)

Հ.Մ.Ը.Մ. «ԱՐՄՍՍ»  
ՊԷՅՐՈՒԹ ԵՒՉ

- ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ Հ.Մ.Ը.Մ. ԿԵՂՈՒՄԿԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ՝
- «Մարզիկ»ի այս թիւով տեսնել՝
  - Խմբագրական-Գրաւր՝ Հ.Մ.Ը.Մ.ի կրտսերները
  - Ամրապնդեց բարոյական արժեքները (ԺԳ)- Յարութ Զեքիճեան
  - Ղեկավար պէտք է ընդունելի ըլլայ ժողովուրդէն- Վ. Յովհաննէսեան
  - 21րդ դարու ֆուտբոլի նոր դիմագիծը- Գ. Թորոյեան
  - Ի՞նչպէս տիպար փառանք մը ունենայ- Յակոբ Զալաքեան
  - Հ.Մ.Ը.Մ.ի Գահիրէի «Արարատ» մասնաճիւղի պատերազմի կրտսերներուն խումբին Լիբանան այցելութիւնը

Թիւր կ'ընդգրկէ նաեւ հայրենի մարզական կեանքի, համացանցի եւ մանկապատանեկան բաժիններ, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ական կեանքի անդրադարձները:

Ստանալու համար դիմել Համագործակցի գրաստանով: Սակ՝ 3000 լ.ո.:

## «ԱՉԳԱԿ»Ի ՄԷՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուած օր մը առաջ, Միւնիխի ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՐ 5:00:

ՄԱՀԱՉՉՆԵՐԸ բացառութիւն են: Մահազ կ'ընդունուի մինչեւ ուղ գիշեր, այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

**We Give Services. ... Not Just Policies.**

**ԱՖՃԻԼ AFHIL**

ՄԱՀԻՒ ԿԵՂՈՒՄԿԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ

OUR HEALTH AND YOURS DON'T SMOKE

FOR THE SAKE OF OUR NERVES AND YOURS KEEP SILENT

WATCH OUT! BABY ON BOARD

UՏՃԻԼ AFHIL

EVEN THOUGH YOU'RE INSURED DRIVE SAFELY

UՏՃԻԼ AFHIL

UՏՃԻԼ ԿԵՂՈՒՄԿԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ

UՏՃԻԼ ԿԵՂՈՒՄԿԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ

UՏՃԻԼ ԿԵՂՈՒՄԿԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ

# Միջապագային Քաղաքական Կեանք

## Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ - ԹՈՒՐԲԻԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՂ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՒԱՐՏԻՆ

Անցնող քանի մը տարիներու Ամերիկայի Միացեալ Նահանգներ - Թուրքիա կապերուն առնչութեամբ մասնագէտներ կը գուշակէին, որ Խորհրդային Միութեան փլուզման պատճառով ստեղծուած նոր միջազգային կարգն ու սարքը ենթարկուէր հիմնական փոփոխութիւններու: Այդ փոփոխութիւններէն մէկը պիտի ըլլար Թուրքիոյ աշխարհաքաղաքական դերին նուազումը Միացեալ Նահանգներու միջազգային տնտեսական ու աշխարհագրական քաղաքականութեան ծիրէն ներս: Սակայն այս տեսակէտը հիմնուած էր Պաղ պատերազմի տուեալներուն վրայ, այն կարծիքով, որ Թուրքիա սկսաւ կարեւոր դեր ունենայ միայն Բ. Աշխարհամարտէն ետք, Միացեալ Նահանգներու ղեկավարութեամբ կազմուած ՕԹԱՆԻ կազմին մէջ ստանձնելով Խորհրդային Միութեան եւ Արեւմտեան երկիրներու միջեւ սահմանը պաշտպանելու պատասխանատուութիւնը:

Պատմականօրէն, սակայն, այդ սահմանը միայն Խորհրդային Միութեան եւ արեւմտեան երկիրներու միջեւ չէր, այլ կար կողմասեան շրջանը, ինչպէս նաեւ՝ Միջին Արեւելքի արաբական գոտին, եւ Թուրքիոյ քաղաքականութիւնը այդ շրջաններուն առնչութեամբ եւ հոն բնակող ժողովուրդներուն հետ ունէր վեց հարիւր տարիէ աւելի պատմութիւն:

Նկատի ունենալով այդ ընդհանուր շրջանին միջազգային աշխարհագրական եւ ռազմագիտական տուեալները, Թուրքիա այժմ դարձեալ կը ստանայ կարեւոր դեր՝ միջազգային աշխարհաքաղաքական մարզին մէջ, ինչպէս որ էր նախքան Բ. Աշխարհամարտին: Այս տեսակէտը հիմնուած է պատմական այն իրականութեան վրայ, որ արեւմտեան երկիրներուն եւ Միացեալ Նահանգներու յարաբերութիւնները Թուրքիոյ հետ չսկսան յանկարծ 1945ին, Բ. Աշխարհամարտի աւարտին, կամ Թուրքիոյ վարդապետութեամբ՝ 1947ին, եւ կամ ՕԹԱՆԻ վարդապետութեան 1947ին, եւ կամ ՕԹԱՆԻ վարդապետութեան 1947ին, եւ կամ ՕԹԱՆԻ վարդապետութեան 1947ին: Պաղ պատերազմի առիթով յարաբերութիւններուն ա՛յլ աւելի սերտացումը, թէեւ նոր փուլ մը հանդիսացաւ, բայց եւ պարզապէս չարտահանուած թիւնն էր Միացեալ Նահանգներու եւ Թուրքիոյ հետ ստանդարտ գուշակութեամբ, թերեւս ոչ գուշակչիւ, տնտեսական եւ աշխարհագրական քաղաքականութեան:

Յետ Պաղ պատերազմի աւարտին, Մ. Նահանգներ - Թուրքիա յարաբերութիւնները կը մնան հիմնուած նոյնպէս համընթաց տնտեսական, առեւտրական, եւ

1990ական թուականներու երկրորդ կէսին երկու երկիրներուն առեւտրական ելեւմուտքի տարեկան գումարը եղած է մօտաւորապէս 60 միլիարտ տոլար (ցուցակ 1): Միայն Գերմանիա արձանագրած է գերազանց գումարներ առեւտրական գործակից Թուրքիոյ հետ՝ տարեկան մօտաւորապէս 11 միլիարտ տոլար: Ֆրանսա եւ Իտալիա արձանագրած են Մ. Նահանգներու հաւասար գումարներ, իսկ Անգլիա եւ Ռուսիա՝ աւելի նուազ (3-4 միլիարտ տոլար): Միացեալ Նահանգներու ընկերութիւնները զոյգ պետութիւններուն կողմէ կը քաղաքացիական յատկապէս արտածելու օդուժի, էլեկտրական մեքենաներու, լուսագիտութեան, բժշկական գործիքներու եւ շուկայի զանազան մարզերու վերաբերեալ գոյքեր, ընդհանուր ենթակառուցի արդիականացման ծրագիրներ եւ այլ շահարկութեան ձեռնարկներ, օրինակ՝ զբօսաշրջութիւնը:

Մ. Նահանգներ - Թուրքիա առեւտրական յարաբերութիւնները դեռ աւելի կը զարգանան: Միացեալ Նահանգներ 1980ին ընդունեցին Թուրքիոյ անդամակցութիւնը ՄԻԿԱԻ (Multilateral Investment Guarantee Agency): 1999ի Սեպտեմբերին երկու պետութիւնները ստորագրեցին ելեւմուտքի կապերը խորացնող նոր համաձայնագիր՝ «Առեւտուրի եւ Շահարկումի Գործունէութեան Համաձայնագիր» ստեղծելով արտածումի եւ շահարկումի երկկողմանի խորհուրդ մը՝ զարկ տալու աւելի լայնատարած յարաբերութիւններու եւ ի հարկին աստիճանաբար սանձազերծելու այդ կապերը արգելակող «վարչական, օրինական եւ իրաւասութիւններու վերաբերեալ» խոչընդոտներ: Այս կապերու խորացման կը սատարեն զոյգ պետութեանց գերագոյն գործադիր եւ օրէնսդիր իշխանութիւնները եւ արտաքին յարաբերութեան համակարգի ծիրէն ներս գործող պետական թէ սեփական հաստատութիւններ, օրինակ՝ ԵՈՒ. Էս. Էքսփորթ Պէնք, Օվըրսիզ Փրայվէթ Ինվեսթմենթ Ֆորմիտիւնը, Եսպանիի Սրմայը Տերնեկի (Տորնեկի Ինվեսթմենթ Էսոսիէյշնը), Թիւրք Սթանտարտարը Էնթրիփլիսիւ, Թրքիզ - Ամերիքըն Պիզնեսմէնթ Էսոսիէյշնը:

Կարելոր է շեշտել սակայն, թէ Մ. Նահանգներ - Թուրքիա առեւտրական յարաբերութիւնները սերտորէն կապուած են նաեւ զոյգ երկիրներուն աշխարհաքաղաքականութեան մարզին: Ամերիկեան առեւտրական շահերը ընդարձակ տեղ կը գրաւեն Եւրոպայի եւ Միջին Արեւելքի շրջաններուն, եւ Միջերկրական ծովը՝ հսկայ արժէք ունի երկիրի տնտեսական դիրքին մէջ: Հետեւաբար, Միացեալ Նահանգներու առեւտրական յարաբերութիւններուն նաեւ մաս առեւտրական, նաեւ մաս կը կազմեն ռազմական, օդուժի, անդրկովկասեան նաւատորմի զարգացումը եւ այդ կապերուն ընդմէջէն համընդհանուր միջազգային դիրքի պաշտպանումը:

Միջազգային ռազմական մարզին մէջ Միացեալ Նահանգներ կը մնան աշխարհի ռազմագիտական համակարգին վերաբերեալ ապրանքներու բարձրագոյն թիւով արտադրողն ու արտածողը, 1993-1997 տարիներուն 53 միլիարտ տոլար արժող միջազգային արտածման ընդհանուր գումարով, մինչ նոյն տարիներուն Ռուսիոյ (երկրորդ բարձրագոյնը) արտածման գումարն էր

մօտաւորապէս 15 միլիարտ տոլար: 1993-1995 տարիներուն, Խորհրդային Միութեան փլուզումէն անկախ, Միացեալ Նահանգները շարունակեցին դէպի Եւրոպա արտածել 9 միլիարտ տոլար արժող ռազմագիտական ապրանքներ դէպի Եւրոպա, որոնց առիւծի բաժինը՝ 2,2 միլիարտ տոլարը (25,6 տոկոսը) տրամադրուած էր այդ շրջանի դաշնակիցին՝ Թուրքիոյ, հակառակ այդ վերջինին մարդկային իրաւունքներու հարցերուն, մանաւանդ՝ Քիւրտերու առնչութեամբ: 1990ական թուականներուն Թուրքիա ներածեց մօտաւորապէս 12 միլիարտ տոլար արժող ռազմամթերք՝ գրաւելով աշխարհի երրորդ տեղը այդ մարզին մէջ: Թէեւ 1990-2000ը նուազ գումար կը արձանագրեց (ցուցակ 2), հաւանական կը թուի, որ այդ տարեկան գումարը, ինչպէս անցեալին, դարձեալ պիտի բարձրանայ մէկ միլիարտէն աւելի, Միացեալ Նահանգներու, Թուրքիոյ, Կովկասի, եւ Միջին Արեւելքի շրջանային տնտեսական եւ ռազմական վիճակի փոփոխութիւններուն համեմատ:

## ՇԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ՝ ՄԱԿԻ ԲԱՆԱԶԵՒ. ՄԱԿԱՅՆ ԼՍՈՂ ԿԱՅ ԱՐԴԵՕՔ



ՄԱԿԻ Ապահովութեան Խորհուրդը վերջին 50 տարիներուն արար-իսրայէլեան տագնապին մասին որոշեցրած է 200 բանաձեւեր, որոնցմէ չատեղը անտեսուած են, իսկ ուրիշներ օգտակար նկատուած են, որովհետեւ կրնան իբրեւ հիմք ծառայել ակնկալուած խաղաղութեան:

Տուեալները ցնցիչ են. 15 անդամներէ բաղկացող Ապահովութեան Խորհուրդը, որուն որոշումները միջազգային օրէնք կը նկատուին, 1948ին ի վեր հրապարակած է 243 բանաձեւեր՝ Լիբանանի, Կուվեյթի եւ Միսրի մէջ խաղաղարար գործողութիւններու գործադրութեան, երկար ժամանակ կամ դադարեցման մասին:

Տակաւին 30 այլ բանաձեւեր եւս պիտի ըլլային, եթէ Միացեալ Նահանգներ օրին դանոնք վեթոյի չենթարկէին: Իսկ ՄԱԿԻ Ընդհանուր Ժողովը, որ այժմ կը բաղկանայ 189 անդամներէ, Ապահովութեան Խորհուրդի բանաձեւերուն կրկնապատիկը հրապարակած է: Այս պարագային բանաձեւեր կ'ընդունուի, երբ մեծամասնութիւն կը գոյանայ եւ, ի տարբերութիւն Ապահովութեան Խորհուրդին, ոչ ոք վեթոյի իրաւունք ունի:

Սակայն այս բանաձեւերուն մեծ մասը գործադրուած չէ, իսկ ՄԱԿը եւ իր անդամ երկիրները պատժամիջոցները եւ գինեալ միջամտութիւնները մէկ կողմ դրած՝ այլ ընտրանքներ չունին իրենց որոշումները պարտադրելու համար:

Անցնող քանի մը շաբաթներուն, Ապահովութեան Խորհուրդը Իսրայէլէն երեք անգամ պահանջեց պաղեստինեան հողերէն ներս թափանցումներու եւ իսրայէլացիներու դէմ անձնասպանական գործողութիւններու դադարեցում:

Իսրայէլի արարքները «Յեղասպանութիւն... վայրագութիւն, արիւնոտ պատերազմ... պետական մակարդակի ահաբեկչութիւն» նկատեցին արաբական պետութիւններու ղեկավարները, Ապահովութեան Խորհուրդի հրապարակային բանաձեւերուն ընթացքին:

Սակայն Տէյվիտ Շէֆ-Փըր՝ Բիւրոյի վարչակարգէն միջազգային 1967ին Իսրայէլ ՄԱԿԻ

նկատմամբ իր վստահութիւնը կորսնցուց եւ իրավիճակը այդպէս կը մնայ մինչեւ այսօր:

Այդ օրերուն Եգիպտոս զօրք կեդրոնացուց Միսրի անապատին մէջ եւ ՄԱԿէն պահանջեց խաղաղարար ուժերու հեռացումը շրջանէն:

Յաջորդող «վեց օրերու պատերազմ»-ին արդիւնքը եղաւ Իսրայէլի կողմէ գրաւուած ոչ միայն Միսրի եւ Կազայի, այլ նաեւ Արեւմտեան Ափի (Յորդանան) եւ Կուվեյթի (Սուրիա): Իսրայէլ, ապա Եգիպտոս, Յորդանան եւ Սուրիա ընդունեցին ՄԱԿԻ Ապահովութեան Խորհուրդին գինադուլի կոչը:

ՄԱԿԻ բանաձեւերը, զորս Միացեալ Նահանգներ եւ ուրիշներ կը գործածեն խաղաղութեան հասնելու համար, որդեգրուած են 1967ի եւ 1973ի պատերազմներուն օրերուն:

Թիւ 242 բանաձեւը կոչ կ'ուղղէ «հողի փոխարէն խաղաղութիւն» սկզբունքներ վրայ հիմնուող լուծումի. Իսրայէլ պէտք է քաշուի 1967ին գրաւուած իր հողերէն:

Թիւ 338 բանաձեւը, որ 1973ի պատերազմէն ետք որդեգրուած է, կոչ կ'ուղղէր անմիջապէս թիւ 242 բանաձեւը գործադրող բանակցութիւններու ձեռնարկման:

Այս երկու բանաձեւերը 1979ին, Քէմփ Տէյվիտի մէջ, Եգիպտոսի եւ Իսրայէլի միջեւ համաձայնութեան իբրեւ հիմք նկատուեցան, եւ որոնց իբրեւ արդիւնք՝ Իսրայէլ քաշուեցաւ Միսրիէն: Սակայն ան տակաւին գրաւուած կը պահուին արեւմտեան Ափն ու Կուվեյթի բարձունքները:

ՄԱԿԻ բազմաթիւ բանաձեւերը անդադարձած են շարք մը հարցերու՝ պաղեստինցիներու օժանդակութեան կառուցման, Երուսաղէմի հարց, պաղեստինցիներու ինքնորոշման իրաւունքի ճանաչում, Իսրայէլի 1978ին Լիբանան ներխուժումը եւ 2000ին՝ հեռացումը:

«Երկու կողմերն ալ Ապահովութեան Խորհուրդին բանաձեւերը խախտած են: «Դէպի խաղաղութիւն հսկայական մը, այդ պետութեան շրջաններուն մեծ մասը կը գտնուէր Յորդանանի, իսկ Կազան՝ Եգիպտոսի իշխանութեան տակ:

1967ին Իսրայէլ ՄԱԿԻ «ՌՈՅԹԸՐԸ»

**ՑՈՒՑԱԿ 1**  
Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ - ԹՈՒՐԲԻԱ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵԼԵՒՄՈՒՏՔԸ, 1993-1999  
(ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ

1993	1994	1994	1994	1994	1995	1996	1997	1998	1999
4,336	3,948	3,948	3,948	3,948	5,238	4,852	6,365	6,287	5,517

Աղբիւր՝ IMF

**ՑՈՒՑԱԿ 2**  
1996-2000, ԱՄԵՆԷՆ ԱՒԵԼԻ ՌԱԶՄԱՄԹԵՐՔ ՆԵՐԱՃՈՂ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋԻՆ 5 ԵՐԿԻՐՆԵՐԸ  
(ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐՈՎ, 1990ԱՎԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ ՍԱԿԵՐՈՎ)

Թայուան	1996	1997	1998	1999	2000	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ 1996-2000
Սեւտական	1,313	4,859	4,022	1,642	445	12,281
Արաբիա	1,728	2,770	2,529	1,243	92	8,362
Թուրքիա	1,143	955	1,766	1,096	704	5,664
Հարաւային Եւրոպա	1,566	715	870	1,475	708	5,334
Չինաստան	1,047	556	88	1,455	2,085	5,231

Աղբիւր՝ SIPRI


աշխարհաքաղաքական շահերու վրայ: Թուրք կառավարութեան համար Միացեալ Նահանգները կը ներկայանան իբրեւ աղբիւր՝ ռազմական բնոյթ կրող ճարտարարտեսական եւ արդիականացման զարգացումներու: Միացեալ Նահանգներ, իբրեւ համաշխարհային մակարդակի գերուժ, կը ներկայացնեն աշխարհագրական հակակշիռ եւրոպական եւ ռուսական աշխարհագրական մրցակցութեան ասպարէզէն ներս:

Թուրք ղեկավարութեան համար կարեւոր է սիրահանի Միացեալ Նահանգներու պետական, առեւտրական եւ ելեւմտական հաստատութիւններուն համագործակցութիւնը: Տրամադրութիւն եւ տրամաբանութիւն մը, որ կը զուգահեռի ամերիկեան առեւտրական եւ աշխարհագրական շահերուն Միջերկրականի մանաւանդ Միջին Արեւելքի, ինչպէս նաեւ հետզհետէ նախկին Խորհրդային Միութեան եւ Կեդրոնական Ասիոյ տարածքին:

**«ԱՉԴԱԿ» Ի ՀԵՌԱՅԻՄԻ ԹԻԻԵՐԸ**  
«ԱՉԴԱԿ»-ի ղեկավարը Ռուսիայի Բազմազան Ռեզիդենտը  
Բեռլին, Թիւրքիա. 258526, 260115 եւ 241274:







ՊԱՏԵԹՊՈԼ

ՌԻԱՏԻ - ՍԱԺԷՍ՝ 1 - 1

Լիրանանի պասթեթպոլի տղոց ախոյեանութեան աւարտական երկրորդ ճակատումին, երէկ Ռիատի իր դաշտին վրայ կարեւոր յաղթանակ մը արձանագրեց, երբ յետ երկարաձգման 104 - 97 արդիւնքով պարտութեան մատնեց Սաժէսը. այսպիսով, արդիւնքը այժմ 1 - 1 է երկու խումբերուն միջև:

Բաւական հետաքրքրական եւ տաք ճակատումէ մը ետք վերջ գտաւ այս մրցումը: Կիսախաղին Ռիատի 59 - 50 արդիւնքով յառաջացած էր, մինչ չորրորդ քորթը վերջ գտաւ 91 - 91 արդիւնքով:

Աւարտական երրորդ ճակատումը տեղի կ'ունենայ վաղը՝ Չորեքշաբթի, Ղազիրի դաշտին մէջ, ժամը 20:45ին:

Յոր դիրքի մրցումին, այսօր տեղի կ'ունենայ երկրորդ հանդիպումը՝ Անիպալի եւ Շանվիլի միջև, Չաճէի մէջ, ժամը 18:00ին: Առաջին մրցումը վերջ գտած է ի նպաստ Շանվիլի՝ 79 - 70:

ՔԱՂՇԻՈ

ԱԼՊԵՐԹԻՆԻ ԲԱՑԱԿԱՅ՝ ՄՈՆՏԻԱԼԷՆ

Իտալիոյ ֆուտպոլի ազգային խումբին միջինապահ Տեմիթրիօ Ալպերթիին, որ անցեալ կիրակի օր իր կազմին՝ Ա. Սէ. Միլանի հետ իր կատարած մրցումին ընթացքին վերաւորութեամբ (Եւրոֆուտբոլի դէմ), 2002ի Մոնտիալէն պիտի բացակայի, յայտնեցին անոր ակումբին պատասխանատուները: 30 տարեկան Ալպերթիին, որ 79 անգամ կրած է Իտալիոյ ֆուտպոլի ազգային խումբին շապիկը երկուսէն երեք ամիս պիտի բացակայի դաշտերէն:



Տեմիթրիօ Ալպերթիի (աջից)

Հակառակ անոր որ ան իր մասնակցութիւնը բերաւ 2002ի Մոնտիալէն գտումի մրցումներուն, սակայն ճափոնի եւ Հարաւային Բորէայի մէջ տեղի ունենալիք մրցումին ան շատ հաւանաբար նկատի չ'առնուի իրեն հիմնական մարզիկ, իր մարզիչին՝ Ճիովանի Թրափաթոնի կողմէ, վերաւոր ըլլալուն պատճառով:

ԼԵՎԱՍ

ՇԱՐԱԹԱԿԵՐՁԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Անցեալ շաբաթավերջին, Լ. եւ Ս. Յակոբեան քոլէճի դաշտին վրայ տեղի ունեցան Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԵՎԱՍԻ պասթեթպոլի մրցումները, որոնք տուին հետեւեալ արդիւնքները:

ՇԱՐԱԹ. 13 ԱՊՐԻԼ

Ս. Խանամիրեան - Գ. Չաթալպաշեան 67 - 5 (միջակ աղջիկներ)

Յովակիմեան - Մեսրոպեան 29 - 14 (միջակ տղաք)

Մեսրոպեան - Եղիշէ Մանուկեան 60 - 51 (մեծ տղաք)

Ս. Բառասից Մանկանց - Թորոսեան 4 - 49 (միջակ տղաք)

Կ. Բ. Վ. - Հայ Աւետ. Գրիգէ (Այնճար) 45 - 36 (մեծ տղաք)

Եղիշէ Մանուկեան - Շամլեան - Թաթիկեան 13 - 12 (մեծ աղջիկներ)

Ճեմարան - Շամլեան - Թաթիկեան 41 - 36 (մեծ տղաք)

Մեսրոպեան - Լ. եւ Ս. Յակոբեան 20 - 0 (մեծ աղջիկներ)

ԿԻՐԱԿԻ 14 ԱՊՐԻԼ

Ս. Ազնէս - Դպրեվանք 36 - 12 (միջակ տղաք)

Նուպարեան - Խրիմեան - Գ. Չաթալպաշեան 24 - 6 (միջակ աղջիկներ)

Ս. Հովակիմեան - Գ. Հարպոյեան (Ս. Խաչ) 20 - 0 (միջակ տղաք)

ԼԻԲԱՆԱՆ ՈՒՆԵՅԱԻ ՎՈՒՊՈԼԻ ՆՈՐ ՖԵՏԵՐԱՍԻՈՆ

Անցեալ Կիրակի օր Լիբանանեան Համայնաբանին մէջ տեղի ունեցաւ Լիբանանի վոլիպոլի նոր ֆետերասիոնին ընտրութիւնը, որուն ընթացքին Նաարի Նաարի Լահուտի գլխաւորած ցանկը ամբողջութեամբ յաջողեցաւ ապահովել թուներուն 99 առ հարիւր: Նշենք, թէ քուէարկութեան իրենց մասնակցութիւնը բերին 163 ակումբներու ներկայացուցիչները:

Ստորեւ՝ նոր ֆետերասիոնին կազմը, իր ստացած ամիւտներով:

Ղասսան Քապիհա (346 ամիւտ), Նաարի Լահուտ (345 ամիւտ), Ուալիտ Եունէս (338 ամիւտ), Ժորժ Խուրի (337 ամիւտ), Ֆրանսուա Հաժ (337 ամիւտ), Ուալիտ Քասուֆ (333 ամիւտ), Անտրէ Լահուտ (332 ամիւտ), Էլիսա Թալէշ (331 ամիւտ), Էմիլ Տրպար (330 ամիւտ), Էլի Ապտ Ահատ (324 ամիւտ), Եասէր Ապուշի (321 ամիւտ), Շարպիլ Մանսուր (320 ամիւտ), Էմիլ Ժապպուր (307 ամիւտ), Ալի Խալիֆէ (281 ամիւտ) եւ Ալի Ֆաուալ (231 ամիւտ):

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԼԱՆՍ - ԼԻՈՆ ՍՈՒՐ ՊԱՅՔԱՐ՝ ՏԻՏՂՈՍԻՆ ՐԱՄԱՐ

Ֆրանսայի ֆուտպոլի ախոյեանութեան աւարտէն քանի մը հանգրուան առաջ տիտղոսին համար, մանաւոր իր վերջին պարտութենէն ետք՝ Մարսէլէն (1 - 0):

Լիլ - Մոնաքօ հանդիպումը վերջ գտաւ 1 - 1 արդիւնքով: Մարսելօ կալարտօ նշանակեց Մոնաքոյի կողմ (37րդ), իսկ Օլիվիէր Պրէսոֆի՝ Լիլի կողմ (49րդ):

Ստորեւ՝ 32րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Օքսէն - Սոչօ	2 - 0
Պասթիա - Լանս	3 - 1
Կենկան - Պորտօ	2 - 1
Լիլ - Մոնաքօ	1 - 1
Լիոն - Մոնպելիէ	0 - 0
Մէս - Ռէնն	3 - 1
Նանթ - Լորիան	2 - 0
Սըտան - Թրուա	0 - 0
Մարսէլ - Փարիզ Ս. Ժ.	1 - 0

ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

ԿԵՏ	61
1.- Լանս	60
2.- Լիոն	57
3.- Օքսէն	55
4.- Փ. Ս. Ժ.	52
5.- Լիլ	.....
16.- Մէս	32
17.- Կենկան	31
18.- Լորիան	29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՓԻՆԻԿ - ԲԱՆԱՆՑ՝ 3 - 1



Սուրէն Արաբաճեան, որ խօսք կ'առնէ «Փինիկ» - «Բանանց» մրցումէն առաջ:

Անցեալ շաբաթավերջին բացուեցաւ Հայաստանի ֆուտպոլի ախոյեանութեան նոր եղանակը:

Ա. հանգրուանի մրցումներուն, ախոյեան «Փինիկ» երեւան 3 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց «Բանանց» երեւանը: Հակառակ իր կրած այս պարտութեան, սակայն, «Բանանց» այդքան ալ դիւրին մրցակից մը չեղաւ ախոյեանին համար:

«Սպարտակ» երեւան 2 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց «Արարատ» երեւանը, չնորհիւ՝ Արամ Յակոբեանի (25րդ) եւ Անդրանիկ Զանազանեանի (88րդ) նշանակած կոլերուն:

Մեծագոյն յաղթանակը, սակայն, եղաւ «Շիրակ» Գիւմրի, որ 4 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց «Լոռի» Վանաձորը: «Միքա» Աշտարակ 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց «Ջուարթնոց» երեւանը, իսկ «Տինամօ - 2000» երեւան՝ «Կոտայք» Արզնիկը (3 - 1): Միակ մրցումը, որ վերջ գտաւ հաւասարութեամբ, այդ ալ «Լեռնային Արցախ» - «Լեռնագործ» կապանի միջև էր (1 - 1):

Մինչեւ յառաջիկայ Մայիս 4, ախոյեանութեան մրցումները կը դադարին, րաժակի մրցաշարքին պատճառով:

Հայաստանի ֆուտպոլի ֆետերասիոնի նախագահ Սուրէն Արաբաճեան «Փինիկ» - «Բանանց» մրցումէն ետք յայտնեց, թէ բաւական գոհ մնացած է ախոյեանութեան բացման մրցումներէն, նկատի ունենալով, որ մարզիկները քուէագրած են բաւական հետաքրքրական եւ բարձր մակարդակի խաղ մը:

ՓԻՆԿ ՓՈՆԿ

ԱՅՍՕՐ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՏՂՈՑ ԿԱԶՄԻՆ ԵՒՈՅԹՆԵՐԸ

«Միշէլ Մըր»-ի անուան համալիրին մէջ (Նահրէլ Մոթ) տեղի ունեցող Լիբանանի փինկ փոնկի խմբային ախոյեանութեան մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ.Ի տղոց խումբը, որուն մաս կը կազմեն Ռազմիկ Շեմեմեան, Ալֆրէտ Նաթրմ - Սարգիսեան եւ Սըրուան Սըրշի, երէկ յաղթանակ մը եւ արձանագրեց, 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնելով ԱՀԻ Սալտան:

Այսօր, անոնք երկու մրցում կը կատարեն. առաջինը՝ Շանվիլի դէմ (ժամը 5:30ին), իսկ երկրորդը՝ ժամհուրի դէմ (ժամը 7:00ին):

ՊՈՒՆՏՍԵԼԻԿԱ

ՊԱՅԷՐ ԼԵՒԵՐՔՈՒՉԸՆ Կ՝ՈՒՂՂՈՒԻ ԴԷՊԻ ՏԻՏՂՈՍ

Գերմանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան (Պունտսլիկա) 31րդ հանգրուանի մրցումներուն, պարագուլտի դիրքը գրաւող Պայէր Լեւերքուզըն չկրցաւ յաղթական վերադառնալ Համպուրկի դաշտէն (11րդ) եւ 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց անոր հետ: Սերկէլ Պարպարէզ նշանակեց Համպուրկի կողմ (5րդ), իսկ Օլիվիէ Նէօվիլ՝ Լեւերքուզընի կողմ (13րդ):

Լեւերքուզընի այս արձանագրած հաւասարութենէն, սակայն, չկրցաւ օգտուիլ անոր անմիջական մրցակիցը՝ Պորուսիա Տորթմունտ, որ 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Եորկըն ֆեյթերստն նշանակեց հիւրերէն կազմին կողմ (48րդ):

Շալթէ 3-0 արդիւնքով պարտութեան հետանալէ ետք վերադարձը Պրեմըրի լիգայի մրցումներէն:

Ստորեւ՝ 31րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Երուսիլարթ - Գորպուս	0-0
Բայըրլայուքըն - Պորուսիա Տորթմունտ	1-0
Նիւրնպերկ - Պայէրն Միւնխի	1-2
Պոր. Մեոնշընկլայտպիս - Վոլֆսպուրկ	0-2
1860 Միւնխի - Ֆրայպուրկ	5-2
Քեոլց - Ջանքք Փաուլի	2-1
Համպուրկ - Պայէր Լեւերքուզըն	1-1
Վերտըր Պրեմըրն - Շալթէ	3-0
Հերթա Պրիլմ - Հանգա Ռոստր	1-0

ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

ԿԵՏ	66
1.- Պայէր Լեւերքուզըն	61
2.- Պորուսիա Տորթմունտ	59
3.- Պայէրն Միւնխի	58
4.- Հերթա Պրիլմ	58
5.- Շալթէ	.....
15.- Նիւրնպերկ	28
16.- Ֆրայպուրկ	24
17.- Քեոլց	23
18.- Ջանքք Փաուլի	22

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ՉԵԼՍԻ ԵՒ ԱՐՍԵՆԱԼ ՀԱՍԱՆ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐՔԻ ԱԻԱՐՏԱԿԱՆԻՆ

Անգլիոյ ֆուտպոլի բաժակի մրցաշարքին կիսաաւարտական հանգրուանի մրցումներուն, Եունայթեդը, որ շաբաթավերջին մրցումը չկատարեց: Մրցումին «որը» կողմ նշանակեց Մայքըլ Օուլսըն (55րդ):

Նիւթթըլ կարեւոր տրըվէնտի դաշտէն (15րդ), բարձրացաւ 2րդ դիրքը, մէկ կէտով գերազանցելով Մանչեսթըր Յունայթեդը, որ շաբաթավերջին մրցումը չկատարեց: Մրցումին «որը» կողմ նշանակեց Մայքըլ Օուլսըն (55րդ):

Նիւթթըլ կարեւոր տրըվէնտի դաշտէն (15րդ), բարձրացաւ 2րդ դիրքը, մէկ կէտով գերազանցելով Մանչեսթըր Յունայթեդը, որ շաբաթավերջին մրցումը չկատարեց: Մրցումին «որը» կողմ նշանակեց Մայքըլ Օուլսըն (55րդ):

Ստորեւ՝ 35րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Ասթոն Վիլա - Լիծ	0-1
Չարլթըն - Սաութհեմթթըն	1-1
Տերսիլ Քաուլթի - Նիւթթըլ	2-3
Էվըրթըն - Լայպըր Սիթի	2-2
Սանտորիքտ - Լիվըրպուլ	0-1
Թորթհեմ - Ուեսթ Համ	1-1

ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

ԿԵՏ	72
1.- Արսենալ	71
2.- Լիվըրպուլ	70
3.- Մանչեսթըր Յունայթեդ	64
4.- Նիւթթըլ	61
.....	.....
18.- Իստուրի	33
19.- Տերսիլ Քաուլթի	29
20.- Լայպըր Սիթի	23

ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱԼԵՆՍԻԱ ՊԱՐԱԳՆՈՒՄԻ ԴԻՐՔԸ ԽԵՆՑ ՌԷԱԼ ՄԱՏՐԻՏԷՆ

Սպանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան 34րդ հանգրուանի մրցումներուն, Ռէալ Մատրիտ 3-1 արդիւնքով պարտութեան մը կրելէ ետք վտանգաւոր դիրքի վրայ գտնուող Օասունայէն (17րդ), նահանջեց 2րդ դիրքը, պարագուլտի դիրքը զիջելով Վալենսիայի, որ 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Մայորքայի հետ:

Տեփոթիլոս Քորուս կարեւոր յաղթանակ մը արձանագրեց, երբ 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Էսպանիոլը: Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, այժմ անիկա երկու կէտով ետ կը մնայ Վալենսիայէն: Պարսելոնա բարձրացաւ 4րդ դիրքը, 3-2 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ալաւէսը:

Ստորեւ՝ 34րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Պարսելոնա - Ալաւէս	3-2
Տեփոթիլոս Քորուս - Էսպանիոլ	3-1
Օասունայ - Ռէալ Մատրիտ	3-1
Ռայօ Վալեքանօ - Ռէալ Վալադոլիտ	1-0
Ռէալ Սոսիեդատ - Մալալկա	2-1
Ռէալ Սարալիսա - Սիլեհոնիոս Պիլպո	2-2
Սելիլա - Լաւ Փալմաս	1-1
Թենտերիֆէ - Ռէալ Պեթիս	2-1
Վիարիալ - Սելիա Վիլո	2-1
Մայորքա - Վալենսիա	1-1

ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

ԿԵՏ	63
1.- Վալենսիա	62
2.- Ռէալ Մատրիտ	61
3.- Տեփոթիլոս Քորուս	57
4.- Պարսելոնա	54
5.- Սելիա Վիլո	.....
.....	.....
18.- Ռայօ Վալեքանօ	37
19.- Ռէալ Սարալիսա	36
20.- Թենտերիֆէ	35

